

լանի ստորագրած ու շրկած է Պատերազմական խորհուրդին: Նոր տարիին յաջորդող օրերուն՝ Պատերազմական խորհուրդը իր կարծիքը կը յայտնէ եւ լուսանցքին վրայ կ'աւելցնէ «ad notam zuenehmen, 6 Jan. 684.»:

Շաբաթ մը վերջ, Յունուար 14-ին, վկայագիրը արդէն պատրաստ՝ թագաւորական ոսկետառ ստորագրութեան համար, Լէոփոլտի Լինցի գրասենյանին առջեւն է: Գրութեանէն յայտնի է՝ թէ մեծակնիք մագաղաթեայ վկայականին մէջ նկարած գինանշանը, գրութեան վերեւ գունաւոր դժուած է, գինանշաններու պալատի նկարիչէն: Կոմսական վկայականն ալ նոյն հակաթրքական եւ Հունգարիոյ ի նպաստ կատարուած արժանիքները կը յիշէ, որոնց մասին արդէն շատ անգամ խօսած ենք: «Որոշեցինք, կը գրէ թագաւորը, քանի որ մեր հունգարական թագաւորութեան, անոր ժողովուրդին եւ Հունգար ազգին հանդէպ ունեցած մեծ սիրոյդ համար, մեր սուրբ թագին եւ թագաւորութեան կը սխալաբխ ծառայել հաւատարմութեամբ եւ յարատեւօրէն, ինչ որ միշտ նկատած ենք զՔեզ, Պետրոս Ապետիք, կը պատուենք կոմսութեան տիտղոսով, գերմանական ժողովրդական բացատրութեամբ Graff կոչումով, մեծապատիւ(1) մակդիրով, ասոր հետ կապ ունեցող բոլոր պատիւներով, եւ Հունգարիոյ մեր թագաւորութեան մէջ Փաթա կոչուած կալուածով. եւ կը կարգենք ու կը գրենք զքեզ Մեր վերոյիշեալ Հունգարական թագաւորութեան եւ անոր Միացած Մասե-

(1) Դիտողութեան արժանի է՝ թէ ո՛րքան յարգելի կը նկատուէր Պետրոս Ապետիբի հակաթրքական ծառայութիւնը, եւ թէ թուրքերը վնասելը, լաւ եւս ասոր նախապատրաստութիւնը՝ ո՛րքան կարեւոր դեր խաղցած էր Ապետիբի կոմսութիւն ստանալուն մէջ: Կրնային իրեն աւելի պարզ ձևնադարական Magnificus liberbaro տիտղոսը չընորհել: մինչ ասոր փոխարէն՝ ինքը Illustrissimus Comes տիտղոսը կ'ընդունին. եւ սա թէ՛ զարուն, երբ ձունդարիոյ մէջ Ձաքինը, էսթէր-հադիները, Թուրզոները, Իլեկ Զաքիները, Նատա-


ըստն իսկապես կոմսերու թիւին եւ միու-
թեան մէջ...» :

Վիլայականներն համաձայն՝ Պետրոս Ապետիք հետեւեալ զինանշանը ստացած է. հորիզոնական կերպով՝ մէկ անգամ, իսկ զազաթնահայեաց կերպով՝ երկու անգամ բաժնուած վահան. առաջին կապոյտ միջոցին մէջ՝ ոսկի արեւ. երկրորդ կարմիր միջոցին մէջ՝ դատկական դառն. երրորդ կապոյտ միջոցին մէջ՝ արծաթեայ լուսին. չորրորդ տակի միջոցին մէջ՝ երեք ցուլերու թազակիր գլուխներ. հինգերորդ կարմիր միջոցին մէջ՝ կանաչ բլուրի վրայ զինուորական վահան. վեցերորդ ոսկի միջոցին մէջ՝ երեք մեղուներ. մէջտեղը արծաթեայ վահանի վրայ՝ կայսերական երկգլխանի արծիւը. վահանակիրները՝ երկու ոսկի թազակիր առիւծներն են, իսկ վահանին վրայ՝ պարսկական գլխարկ կրող առնացի գլուխ մը կը բարձրանայ:

Ուշադրութեամբ դիտելով՝ ժէ. դարու արեւելեան ճօնութեամբ նկարուած այս գինանշանը, մեր աչքին առջեւ կը պատկերանայ Ապետիքի շարժուն կեանքն ու գործունէութիւնը: Դուրս կը ցայտէ նրւէր ընդունողին ամբողջ անձնաւորութիւնն ու ծագումը: Զինանշանները արդէն կը խօսին. կը բաւէ կարդալ գունաւոր պատկերները: Վայրկեան մը մենք ալ կանդ առնենք ուրեմն հունդարական այս գեղեցիկ գինանշանին առջեւ:

Աստիճակի դինամիկան թողած առաջին
տարաձորությունը մեր վրայ՝ անոր պարս-
կական յատկանշական դիժերն են, որոնք

չինքները, եւն... Հունգարիոյ նշանաւորագոյն ըն-
տանիքները միայն կը կրէին այս պատուանշնը։ Ա-
լէքի զարնող է նոյնպէս Ապետիքի կոմսութեան
րաբժարանալուն մէջ՝ թէ իսկիսւաւ ոչ Հունգարական
եւ ոչ ալ զերմանական Պարոն-ի ստիպման ընդու-
նած էր. մանաւանդ որ եւ ոչ իսկ բնիկ էր, եւ
նա երբեք չէր ալ ուզած՝ այնպիսի նկատուիլ։
Ապետիք Հունգարացի կալուածատէր եւ կոմս ե-
ղաւ, եւ ու թէ իբր հիւր պարող « աղնուական
օտարական » մը։



ԱՊԵՏԻՔ ԿՈՄՍԻ զինանշանը

գլխավորաբար կ'արտայայտուէին վահա-
նին վերեւ ներկայացուած մօրուեղ պար-
սիկ դէմքով (Թերեւս ինքնին նուէր ընդու-
նող Ապետիք Կոմսին զիմանկարը․ նման
սովորութիւններ պակաս չեն ուրիշ զինա-
նչաններու մէջ ալ), յետոյ ոսկեշող արե-
ւովն ու լուսինով։ Այս նշանները Ապետի-
քի վաղեմի քրիստոնէական ընտանիքի նը-
շաններն էին, զոր նուիրատուութեան
թուղթը յատկապէս ալ կը շնչէր։ Թա-
ղաւորը պարզապէս չին զինանշանը կ'ընդ-
լայնէր ու կը հաստատէր։ Զինանշան դժող
վիեննացին, հաւանաբար Պետրոս Ապետի-
քի խնդրանքով, նուէր ընդունողին արե-
ւեւեան ծագումը կ'ողջէր շնչել այդ խոր-
հրդանիշերով, որով չին զինանշանը
կ'ընդլայնուէր։ Աւելի խոր քննելով, կըր-
նանք դեռ ուրիշ նմանութիւններ ալ գտնել
պարսկական պետական զինանշանին հետ,
որուն մէջ նոյնպէս դեր ունի ոսկեծաճանչ
արեւը, առիւծը, եւն․․․, ինչպէս Ապետի-
քի զինանշանին մէջ։ Այս խորհրդանիշները
արդէն հնուց ի վեր կը գործածուէին
Պարսկաստանի մէջ։

Յոսէփի գլուխն ալ Ապետիքի արեւելցի

ծաղումը կը նշանակէր: Յուրը հոններն ալ իրը առաջնորդ կենդանի կը նկատէին. նոյնը կը տեսներ յաճախ նաեւ Պալ-քան (Մոլտաւ, եւն...) ցեղապետներու զինանշաններուն մէջ: Հունգարիոյ մէջ այս արեւելեան ընդլթ ունեցող ցուլի գըլ-խուն կը հանդիպինք՝ Վարպուրկէն եկած Պուգատ-Հահոլտ տոհմի, եւ ասոնցմէ սե-րած՝ Պանֆի ընտանիքի, ինչպէս եւ Փա-լաշթի եւ Պառնա ընտանիքներու զինանշ-աններուն մէջ:

Զինուորական վահանը կը նշանակէր
Պետրոս Ապետիք Կոմսի անդուլ եւ անձ-
նուէր պայքարը՝ ընդդէմ թրքական վը-
տանգին, որուն դէմ ինքը իրր զօրաւոր
վահան կ'անդնած էր՝ քրիստոնէութիւնը
պաշտպանելու համար։ Հունգարիոյ ազ-
նուականներէն՝ Պայնա ընտանիքը կը գոր-
ծածէր նման գիծեր մը իր գինանշանին
մէջ։

մէջ՝
Հունգարական զինանշաններուն մէջ՝
հեթանոսական իշխանութեան դէմ պայ-
քար կը նշանակէր նաեւ լուսնի մահիկը,
որ սակայն իբր գլխաւոր նշան՝ շատ հազ-
ուադէպ է հունգարական զինանշաններուն
մէջ. ընդհանրապէս ուրիշ նշաններու հետ
միացած է: Այս նշանը կ'երեւի Վենք-
միացած է: Այս նշանը կ'երեւի Սու-
հայմ, Պենիոլաքի, Նիարի, Փլաթի, Տու-
քա, Զաքոյ եւն... կոմսական ընտանիք-
ներու զինանշաններուն մէջ: Հունգ-Փազ-
ման ընտանիքի պայագատներն ալ՝ նոյն-
պէս աստղ կամ լուսին կը գործածէին ի-
րենց զինանշաններուն վրայ:

Պետրոս Ապետիք խորապէս կրօնասէր
կաթողիկէ մըն էր. այս հաւատքին նշանն
էր եկեղեցական սպիտակ դրօշ կրող զատ-
կական դառնուիլը, զոր միայն քահանա-
յական կամ եկեղեցական ասպարէզի մէջ
փայլող անձերը կը գործածէին: Հունգա-
րիոյ ազնուականներէն՝ այս խորհրդանիշ-
ը կը կրէին նաեւ վաղեմի Քուլթայի,
Կրէֆլ, Պանոյ, Զալա եւն... ընտանիք-
ները:

Երեք մեղուկները՝ նուէր ընդունողին

Ժրաջան եւ համեստ կեանքը կը նշանակէին: Այս նշանը զլիսաւորաբար հունգարական նոր զինանշաններուն մէջ կը տեսնենք, ըլլայ առանձին, կամ փեթակով. այսպէս օրինակի համար Ֆիալքա, Վերթեշի, Լիպնէր, Վուրմ-Ալմայի, Քերթէս եւն... ընտանիքներու զինանշաններուն վրայ:

Ապետիքի զինանշանին վրայ ամէնէն հետաքրքրականը, սակայն, արծաթէ վահանին կեղերնը զծուած կայսերական երկզլխանի արծիւն է, որ ամէնէն շատ կը շեշտէ Պարսկահայուն կատարած կարեւոր ծառայութիւնը՝ ի նպաստ Վիեննայի արքունիքին: Այս ժամանակները կայսերական արծիւը ամէնէն հաւատարիմները եւ ամենակարեւոր ծառայութիւն մատուցողները միայն կ'ընդունէին: Նման արծիւով կը պարծէին երբեմնի հզօր ու համբաւաւոր, այսօր սակայն սպառած, թուրքոյնը, եւ չեխ ծաղում ունեցող Քոթէք կոմսական ընտանիքը:

Կայսերական երկզլխանի արծիւը չափազանց հազուադիւր է զինանշաններու պատմութեան մէջ: Հունգարացի ազնուականներու զինանշաններուն մէջ ստէպ երեւցող միազլուխ արծիւը բոլորովին տարբեր խմստ մը ունի վերը յիշուածէն: Նմանապէս կը տարբերին ասոնցմէ Սեցի-

ներու եւ Տերենչենիներու երկզլխան արծիւները, որովհետեւ սա վաղեմի Պալոկ ընտանիքի նշանն էր:


Երկզլխանի արծիւին նման՝ պատուի նշան մըն էին նաեւ զինանշանի մէջ կայսերական սկզբնաղբերը, զոր քանի մը հունգարացի ազնուականներ ընդունած էին: Այսպէս, օրինակի համար, Էսթերհազի եւ Օթլիք ընտանիքները՝ Լէոփոլտ Ա.ի սկզբնատառերը. Կարաչալքովիները՝ Մարիա Թերեզա Թադուհին սկզբնատառերը կը գործածէին:

Ինչպէս տեսանք, ուրեմն, Պարսկաստանի Վիեննայի դեսպան՝ Պետրոս Ապետիք կոմսի զինանշանը մեր առջեւ կը բանայ այս բացառիկ մարդուն ամբողջ կեանքը: Մեր առջեւ կը պարզէ զինանշանի տիրոջ արեւելեան, պարսկահայ ծագումը, հակաթրքական պայքարը, քրիստոնեայ ջերմեռանդ հոգին, ժրաջան համեստ կեանքը, եւ հուսկ՝ Թադաւորին դրահատանքը իր օգտաշատ գործունէութեան համար: Այս զինանշանը Ապետիք կոմսի կեանքին խոստովան է:

Հունգարերէնէ բրգմ.

Հ. ԱՆԴՐԵԱՍ ՖՈԿՈԼԵԱՆ

(Շարունակելի)



ՊԵՂԼԱՏՀՈՐԻ ԱՐԱՔ ՊԱՏՄԱԳԻՐԸ

ԵՒ ՀԱՅԵՐԸ

(Շար. Բազմ. 1955, թ. 3, էջ 62)

ԻՐ. — Վարդան՝ Ամրի ազատագիրը՝ Աղեֆաւնդրիոյ կառավարիչ. —

Կը պատմուի թէ երբ Ամր իր ազատագիրը՝ Վարդան՝ Աղեֆաւնդրիոյ կառավարիչ կարգեց ու Ֆոսթաթ (Գահիրէ) դարձաւ, շատ չանցած հասաւ պաշտօնանկուծեան լուրը, եւ Օթման իրմէ վերջ կառավարիչ կարգեց՝ Ապտալա իպըն Ապրի Սարհ իպըն ալ-Հարթէ, որ Ամր իպըն Լուայի ցեղէն էր, ու Օթման խալիֆային հետ միասին ծծկեր եղբայր եղած էր. ահկա կառավարիչ եղաւ 25ին (645) (էջ 222):

ԻԹ. — Ատրպատականի գրաւումը(1)

Մեզի պատմեց ալ-Հիւսէյն իպըն Ամր Արտապիլցին, լսելով Ուսդըտ Արտապիլցիէն, որ լսած էր ծերերէն, որոնց հասած էր թէ Մուղիրա իպըն Շոպա Քուֆա եւ կա իրր կառավարիչ Օմար իպըն ալ-Խաթթապի (634-644) կողմէն: Հետը բերած էր նամակ մը Հուտհայֆա իպըն ալ-Խամանի, զայն կարգելով Ատրպատականի հրամանատար:

Մուղիրա անոր զրկեց նամակը, մինչ նա (Հուտհայֆա) Նէհաուէնտ կը դրոշմէր կամ անոր մօտիկ տեղ մը:

Հուտհայֆա եկաւ մինչեւ Արտապիլ քաղաքը: Հոն էր մարդպանը, որուն պաշտօնն էր տուրքերը հաւաքել: Մարդպանը

իր քով հաւաքած էր Պաճարուանցի, Մայմաճցի, Նարիրցի, Սարաղցի, Շիզցի, Մայանըճցի եւ ուրիշ պատերազմիկներ, որոնք կռուեցան Խալաֆներուն դէմ, օրեր շարունակ սաստիկ կերպով: Յետոյ մարդպանը հաշտութիւն կնքեց Հուտհայֆայի հետ, բոլոր Ատրպատականցիներուն առնուով, պայմանով որ վճարէ ութ հարիւր հաղար դահեկան եւ Հուտհայֆա առնոյմէ մէկը չսպաննէ, չգերէ, չկործանէ ատրուանները, չհակառակի Բաղաւական, Սապալան, ու Սադրուտան քիւրտներուն, ու չարգիլէ Շիզ քաղաքին բնակիչները պարելու իրենց տօներուն, եւ թոյլ տալու որ ցուցադրեն ինչ որ կը ցուցադրէին:

Յետոյ (Հուտհայֆա) արշաւեց Մուղանի ու ձիւանի վրայ, եւ սաստիկ պատերազմէ վերջ հաշտուեցաւ հետեւին որ զլիսահարկ վճարեն: Կը պատմուի թէ վերջոյ Օմար պաշտօնանկ ըրաւ Հուտհայֆան ջը Օմար պաշտօնանկի վրայ դրաւ Օդու տեղը Ատրպատականի վրայ դրաւ Օդու տեղը Ֆարքատ աս-Մուլամի: Ասիկա Ատրպատական եկաւ Մուսուլէն, եւ կ'ըսուի թէ եկաւ Շահրգորէ այն երկրին վրայէն, որ ծանօթ է Մուսուլիա ալ-Աուտի անունով:

Երբ Օդպա Արտապիլ մտաւ, գտաւ ժողովուրդը դաշինքի պայմաններուն հաւատարիմ, մինչ ինչ ինչ տեղեր ապստամբած էին: Օդպա արշաւեց անոնց վրայ, յաղթեց ու կողոպտեց: Հետն ունէր Ամր իպըն Օդպա աղ-Չահլաւ:

Ուսդըտի կը պատմէ իր «Վաւերաթուղ-

(1) Այս գլուխն ալ թարգմանեցինք որովհետեւ Մուղանի գրաւումը սերտ կերպով կապուած է Ատրպատականի գրաւումին: